նը, կը գրէ իր եղբօր՝ Ոսկան Վարդապետին, որ իրեն միանայ և միասին շարունակեն տպագրական գործը։ Ոսկան՝ Աւետիսին նամակը ցոյց կու տայ Յակոբ կաթողիկոսին, որ կը պատուիրէ անոր երթալ միանալ Աւետիսին և ձեռնարկել Աստուածաշունչի տպագրութեան (2)։

Սա՝ այն Ոսկան Վարդապետն է, որ աշակերտած էր Պօղոս Բիրոմալլիի, էջմիածնի մէջ, Փիլիպպոս կաթողիկոսի օրով, 1634էն սկսեալ, և կաթողիկէ դաւանանքն ընդգրկած էր Կիրակոս, Զաքարիա, Կարապետ վարդապետներուն և ուրիշներու հետ (3)։

Ոսկան Վարդապետ, այն ժամանակ զբաղած ըլլալով Ս. Սարգսի վանքին մէջ, Հոլանտա կ'ուղարկէ իր աշակերտներէն Կարապետ Անդրիանեցին, որ 1662ին արդէն կ'աջակցի Աւետիսի, սաղմոսարանի հրատարակութեան համար, և կը տպագրէ ժամագիրքը։

1663ին Ոսկան Վարդապետ Ղլիջենց

---

(2) Յիշատակարան «Յիսուս Որդի»ի. Գ. Զարբհանալեան, Պտմ. Հայերէն Դպրութեան Բ. տպ. Վենետիկ 1905, էջ 243։ Լեօ, Անդ, 442—447։ Չամչեան, Գ. 658—659։

(3) Archivio S. C. P. F. Congressi Armeni, vol. 1, fol. 23. Asia 3, Armeni di Asia, vol. 223, fol. 183։ Լեօ, Անդ, 446—447։